ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
«ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐՎԵԺ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ДЕТСКИЙ САД ДЖРВЕЖА ОБЩИНЫ ДЖРВЕЖ» ДУЗ НОО
«JRVEZH KINDERGARDEN» PEI CNCO

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղ,34-րդ փողոց, թիվ 9,
jrvezh.mankapartez@gmail.com, հեռ.՝ 022250510

N040 06 դեկտեմբերի 2023թ.

06.12.2023թ

«Ֆոտոն» ՍՊԸ-ին

Տնօրեն՝ Ն.Պետրոսյան

Հասցե՝ ք. ՀՀ ք .Երևան, Ռոստոմի 58

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ Նելլի Պետրոսյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ –ի և Ձեր ընկերության միջև 13.07.2023թ-ին կնքված թիվ ԿՄՋՀՋԳՄՆՈՒՀ- ԳՀԱՊՁԲ - 23/1 ծածկագրով և 01.08.2023թ-ին կնքված թիվ ԿՄՋՀՋԳՄՆՈՒՀ- ԳՀԱՊՁԲ - 23/2 ծածկագրով մատակարարման պայմանագրերը մեր կողմից միակողմանի ամբողջությամբ լուծվելու են 2023թ.-ի դեկտեմբերի 7-ին՝ հիմք ընդունելով պայմանագրերի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի «բ» ենթակետով սահմանված գնորդի իրավունքները, այն է՝ գնորդն իրավունք ունի միակողմանի ամբողջությամբ լուծել պայմանագիրը, եթե վաճառողը (մատակարարը) էականորեն խախտել է պայմանագիրը՝ մասնավորապես , եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի: Նշված պայամանագրերով 2023թ.-ի նոյեմբերի 28-ից հետո մատակարարումներ չեն իրականացվել «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ –ը միակողմանի լուծում է պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ ԿՄՋՀՋԳՄՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ- 23/1 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **59,600** /հիսունինը հազար վեց հարյուր/ՀՀ դրամ, և որակավորման ապահովման գումարը կազմում է **89,490** /ութսունինը հազար չորս հարյուր իննսուն/ ՀՀ դրամ:

ԿՄՋՀՋԳՄՆՈՒՀ- ԳՀԱՊՁԲ - 23/2 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **210,675**/երկու հարյուր տասը հազար վեց հարյուր յոթանասունհինգ/ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը կազմում է **316,031** /երեք հարյուր տասնվեց հազար երեսունմեկ/ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել գնորդի բանկային 1570089895250100 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մինչև 2023թ. դեկտեմբերի 14-ը ներառյալ որակավորման և պայմանագրի ապահովումները համապատասխանաբար փոխանցումը պետք է կատարել գնորդի վերը նշված հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն «Ֆոտոն» ՍՊԸ-ի գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Միաժամանակ հայտնում ենք, որ հիմք ընդունելով պայմանագրերի 8.9 կետը՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը նաև հրապարակվելու է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Վաճառողը (մատակարարը) համարվում է պատշաճ ծանուցված հրապարակման հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

«Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի

Տնօրեն՝ Լ. Սահակյան